58. ԻՐԻՑԿԻՆ ՈՒ ՏԵՐՏԵՐ

Տերտեր տուն կուգյա՝ մեկ օր:

Կասի. - Իրիցկի՛ն ջան, իրիցկի՛ն, չորս ծյու խաշի ուտեմ. ասնոթութենե փորս վեց-վեց է անում:

Իրիցկին կէրթա՝, չորս խա ծյու կխաշի. պիրի կուտա՝ տերտերն ուտի: Վերջի պրտյուն ուտելու ժամանակ խոգյին կուտա:

Իրիցկին կուգյա՝ ծիյվեր կտփի, կովա՝. կասի. - Ա՛խր. տերտե՛ր, թե որ մեռնել պետքյ էր, էլ էն չորս ծյուն ընչի՞ կերա՛ր: Ես էն չորս ծյուն թուխս կտնի՛, չորս ճետեր կխա՛նի, ճետեր կմեծցու՛ցի, չորս խավեր կա՛նի. էն չորս խավեր էլմ թուխս կտ՛նի. իտոնցով ես կշա՛խվի:

Էտասկնա կասի, չում առատուն էնգյա՝խ, որ կուգյան տերտեր տանելու, էլմ կասի. - Ա՛խ, տերտեր, թե որ մեռնել պետկ էր, էլ էն չորս ծյուն ընչի կերա՛ր. ես էն չորս ծյուն թուխս կտնի՛, չորս ճետեր կխա՛նի, ճետեր կճոճացու՛ցի, մեկ էլ թուխս կտնի՛, ինոնցով իմ տղեներ կշա՛խի:

Առատուն կէրթա՝ն տերտեր թաղելու, իրիցկին կէրթա՝, որ իրիցսութող տան:

Էլմ էնտեղ կսկսի բոռալ. - Ա՛խ, տերտե՛ր, թե որ մեռնել պետկ էր, էլ էն չորս ծյուն ինչի՞ կերա՛ր, էլ էն չորս ծյուն ինչի՞ կերար....

Տա՝սի մեչեն մեկ աչքեն կոր տերտեր կուգյա՝ կմոտանա իրիցկուն. կասի. - Ախր. մայրի՛կ. ամոթ ի, խայտառակութեն ի, էն չորս ծյուն ընչի՞ կերար, էն չորս ծյուն ընչի՞ կերար՝ տրիր ես պոչին, կէրթաս: Էլ ուրիշ պա՝ն չունե՞ս ասելու:

Իրիցկին կտառնա տերտրոչ կասի. - Ապա ի՞նչ ասեմ, կո՛ր տերտեր. ապա ի՞նչ ասեմ, կո՛ր տերտեր, ապա ի՞նչ ասեմ, կո՛ր տերտեր...

Տերտեր կտիսնա, որ էսաղիրիս իրիցկին չորս ծյուն էթող, կոր տերտերն առեց պերան. նորեն կուգյա կմոտանա իրիցկնգյան:

Կասի. - Գյենա ա՝ոճվան ասա, իրիցկի՛ն, գյենա ա՝ոճվան ասա: իրիցկի՛ն: